

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանձադ թիվ 27866/10)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

27 հոկտեմբերի 2016թ.

Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Տեր-Սարգսյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք),
հանդես գալով Պալատի հետեւյալ կազմով՝

Միրյանա Լազարովա Տրայկովսկա [Mirjana Lazarova Trajkovska]՝
Նախագահ,

Լեդի Բիանկու [Ledi Bianku],

Քրիստինա Պարդալոս [Kristina Pardalos],

Ալեշ Պեյխալ [Aleš Pejchal],

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Պաուլին Կոսկելո [Pauliine Koskelo],

Թիմ Այքը [Tim Eicke]՝ *դատավորներ,*

եւ Աբել Կամպոս [Abel Campos]՝ *Բաժանմունքի քարտուղար,*

2016 թվականի հոկտեմբերի 4-ին անցկացնելով դռնփակ
խորհրդակցություն,

կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է 2010 թվականի մայիսի 11-ին՝ «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի («Կոնվենցիա») 34-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության քաղաքացի պրն Վաղինակ Տեր-Սարգսյանի («դիմումատու») կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ Դատարան բերված գանգատի (թիվ 27866/10) հիման վրա:

2. Դիմումատուն ծնվել է 1970 թվականին եւ մինչեւ ազատագրկվելը բնակվել է Արմավիրում: Դիմումատուին ներկայացրել է Արմավիրում գործող փաստաբան պրն Ղ. Պապոյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը («Կառավարություն») ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

3 Դիմումատուն մասնավորապես պնդել է, որ իրեն զրկել են արդար դատաքննության իրավունքից, քանի որ ինքը դատապարտվել է այն վկաների նախաքննական ցուցմունքների հիման վրա, որոնց նա հնարավորություն չի ունեցել հարցաքննելու վարույթի որեւէ փուլում, ինչպես նաեւ այնպիսի տեսանկյունների հիման վրա, որոնք դատարանի կողմից չեն հետազոտվել:

4. 2013 թվականի հունիսի 4-ին դիմումատուի՝ իր դեմ ցուցմունք տված վկաներին կանչելու եւ նրանց հարցաքննելու հնարավորություն չունենալու եւ տեսանկյունների հետազոտման վերաբերյալ բողոքներն ուղարկվել են Կառավարություն, իսկ գանգատը մնացած մասով հայտարարվել է անընդունելի՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 54-րդ կանոնի 3-րդ կետի:

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Ա. Ղազախստանում դիմումատուի դեմ հարուցված քրեական գործով վարույթը

5. 2000 թվականի հոկտեմբերի 7-ին Ղազախստանի Կոստանայ քաղաքի սրճարաններից մեկում մի միջոցառման ժամանակ Ս.Մ.-ն դանակահարվել է երկու անձանց կողմից: Նա մահացել է հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին:

6. Հաջորդ օրը Ղազախստանի համապատասխան մարմինները դեպքի առթիվ հարուցել են քրեական գործ՝ դիմումատուին եւ նրա ընկերոջը՝ Բ.Մ.-ին ներգրավելով որպես հիմնական կասկածյալներ:

7. Հարցաքննվել են մի քանի ականատեսներ: Մասնավորապես, վկա Խ.Հ.-ն՝ սրճարանի տերը, նշել է, որ տեսել է դիմումատուին եւ Բ.Մ.-ին տուժողի ու նրա քրոջ որդի Գ.Թ.-ի հետ զրուցելիս: Դեպքի պահին նա գտնվել է սրճարանից դուրս եւ ներս է մտել, երբ լսել է աղմուկը: Այնուհետեւ նա ներկաներից տեղեկացել է, որ Բ.Մ.-ն եւ դիմումատուն դանակահարել են տուժողին ու դիմել փախուստի:

Վկա Կ.Հ.-ն՝ Խ.Հ.-ի որդին, նշել է, որ ինքը եղել է խոհանոցում, երբ լսել է աղմուկը եւ դուրս է եկել սրահ: Այնուհետեւ տեսել է դիմումատուին՝ դանակը ձեռքին տուժողին մոտենալիս:

Վկա Գ.Թ.-ն նշել է, որ ինքն իր մորեղբոր՝ տուժողի հետ, եղել է սրճարանում եւ ականատես է եղել, թե ինչպես են դիմումատուն ու Բ.Մ.-ն դանակահարել նրան:

Վկա Օ.Դ.-ն՝ խոհարարը, որը տվյալ ժամանակահատվածում աշխատել է այդ սրճարանում, նշել է, որ տեսել է, թե ինչպես են դիմումատուն եւ Բ.Մ.-ն վիճել տուժողի հետ ու նրան դանակահարել, որից հետո դիմել են փախուստի:

Վկա Վ.Հ.-ն՝ Խ.Հ.-ի եղբայրը, որն այդ գիշեր նույնպես եղել է սրճարանում, նշել է, որ տեսել է տուժողին եւ Բ.Մ.-ին վիճելիս, որից հետո վերջինս դանակահարել է տուժողին, եւ այնուհետեւ դիմումատուն նույնպես դանակահարել է նրան:

Վկա Գ.Ա.-ն պնդել է, որ դեպքի օրն ինքն իր կնոջ հետ եղել է սրճարանում եւ ականատես է եղել, թե ինչպես են Բ.Մ.-ն ու դիմումատուն հարձակվում տուժողի վրա, նշել է նաեւ, որ դիմումատուի ձեռքին դանակ է տեսել:

Մի շարք այլ անձինք, մասնավորապես՝ երգիչներ Ա.Օ.-ն եւ Ա.Գ.-ն, հյուրեր Վ.Կ.-ն եւ Ե.Բ.-ն, ինչպես նաեւ Լ.Տ.-ն՝ միջոցառումը նկարահանելու համար պատասխանատու անձը, նույնպես հարցաքննվել են: Այդ վկաները կոնկրետ մանրամասներ չեն տրամադրել, անուններ նույնպես չեն նշել, այլ հայտնել են, որ իրենք կամ վիճաբանող անձանցից հեռու են եղել, կամ որեւէ այլ պատճառով չեն տեսել, թե կոնկրետ ինչ է տեղի ունեցել: Վկա Լ.Տ.-ն ճանաչել է դիմումատուին լուսանկարում, որն իրեն ցույց են տվել նախաքննության ժամանակ:

8. 2004 թվականի հունվարի 21-ին Ղազախստանի քննչական մարմինները մեղադրանք են առաջադրել դիմումատուին եւ որոշում են կայացրել նրան կալանավորելու մասին: Քանի որ նրա գտնվելու վայրը պարզ չի եղել, նրա նկատմամբ հետախուզում է հայտարարվել:

9. 2004 թվականի նոյեմբերի 5-ին դիմումատուն ձերբակալվել է Հայաստանում:

10. 2005 թվականի մայիսին դիմումատուն ազատ է արձակվել այն բանից հետո, երբ Հայաստանի եւ Ղազախստանի իրավապահ մարմինների միջեւ նրա հանձնման վերաբերյալ համաձայնություն ձեռք չի բերվել:

11. 2006 թվականի մայիսի 29-ին Կոստանայի մարզային դատարանը Բ.Մ.-ին մեղավոր է ճանաչել սպանության կատարման մեջ եւ նրան դատապարտել է ազատազրկման տասնյոթ տարի ժամկետով:

12. Ինչ վերաբերում է դիմումատուին, ապա գործն ուղարկվել է Հայաստան՝ նրա քաղաքացիության երկրում նրա նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու համար:

Բ. Հայաստանում դիմումատուի նկատմամբ հարուցված քրեական գործով վարույթը

13. 2008 թվականի հուլիսի 8-ին Ոստիկանության Վաղարշապատի բաժնի քննչական բաժանմունքը վարույթ է ընդունել գործը, եւ դիմումատուին առաջադրված մեղադրանքը համապատասխանեցվել է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի համապատասխան դրույթներին: Դիմումատուին մեղադրանք է առաջադրվել դիտավորությամբ սպանություն կատարելու համար:

14. 2008 թվականի օգոստոսի 21-ին դիմումատուն ձերբակալվել է: Նա հարցաքննվել է նույն օրը եւ հրաժարվել է ցուցմունք տալ 2000 թվականի հոկտեմբերի 7-ի դեպքերի առնչությամբ:

15. Գործի քննության ընթացքում դիմումատուն խնդրել է կատարել առերեսում վկաներ Վ.Հ.-ի, Գ.Ա.-ի, Գ.Թ.-ի, Կ.Հ.-ի, Լ.Տ.-ի եւ Օ.Դ.-ի հետ: Քննիչը մերժել է նրա ներկայացրած միջնորդությունն այն հիմքով, որ թե՛ նախաքննության, եւ թե՛ Բ.Մ.-ի վերաբերյալ գործով դատական քննության ընթացքում այդ վկաները պնդել են նրա դեմ իրենց տված ցուցմունքները:

16. 2008 թվականի հոկտեմբերի 20-ին գործի նյութերը՝ ներառյալ հաստատված մեղադրական եզրակացությունը, փոխանցվել են Հարավային քրեական դատարան (առաջին ատյանի քրեական դատարաններից մեկը՝ նախքան Քրեական դատավարության օրենսգրքում համապատասխան փոփոխությունները)՝ գործը դատական քննության նշանակելու համար:

17. Չպարզված ամսաթվին դիմումատուի փաստաբանը գործը լրացուցիչ քննության ուղարկելու միջնորդություն է ներկայացրել այն հիմքով, որ, *inter alia*,

անհրաժեշտություն կա կատարելու մի քանի առերեսումներ, քանի որ առկա են էական հակասություններ դիմումատուի եւ վկաներ Վ.Հ.-ի, Գ.Ա.-ի, Գ.Թ.-ի, Կ.Հ.-ի, Լ.Տ.-ի եւ Օ.Դ.-ի ցուցմունքներում: Պարզվել է, որ Հարավային քրեական դատարանը երբեք չի քննել այդ միջնորդությունը:

18. Քրեական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխություններից հետո գործն ուղարկվել է Արմավիրի մարզի [ընդհանուր իրավասության] դատարան:

Գ. Դիմումատուի վերաբերյալ գործի դատական քննությունը

19. Ըստ դիմումատուի՝ իր դեմ ցուցմունք տված՝ Ղազախստանում բնակվող տասնմեկ վկաները (տե՛ս վերելում՝ 7-րդ պարբերությունը) պատշաճ կարգով դատարան չեն հրավիրվել, եւ մարզային դատարան չի ներկայացվել որեւէ ապացույց առ այն, որ նրանք ծանուցվել են դատական նիստի վերաբերյալ: Դիմումատուն նաեւ պնդել է, որ դատական նիստի նախապատրաստական փուլում տուժողի իրավահաջորդը՝ Ս.Մ.-ի կինը, ներկայացրել է տասնմեկ վկաներից հինգի հայտարարությունները դատական քննությանը չներկայանալու պատճառների մասին: Ռուսերենով շարադրված գրությունները պատշաճորեն չեն հետազոտվել մարզային դատարանի կողմից, բայց կցվել են գործի նյութերին, եւ որոշվել է գործի քննությունը շարունակել բոլոր վկաների բացակայությամբ:

20. Կառավարությունը պնդել է, որ բոլոր տասնմեկ վկաները պատշաճ կարգով ծանուցվել են դիմումատուի վերաբերյալ գործով դատական քննության վերաբերյալ: Սակայն հնարավոր չի եղել ապահովել նրանց բոլորի մասնակցությունը, քանի որ վկաներից ութը գործը քննող դատարան են ներկայացրել Ղազախստանում նոտարական կարգով վավերացված հայտարարությունները, որոնցում նշել են ֆինանսական միջոցների բացակայության, ընտանեկան կամ աշխատանքային հանգամանքների պատճառներով դատական քննությանը ներկայանալ չկարողանալու մասին:

21. Դատական քննության ընթացքում դիմումատուն իրեն մեղավոր չի ճանաչել եւ վիճարկել է Ղազախստանում գործի նախաքննության ընթացքում վկաների տված ցուցմունքների ճշմարտացիությունը:

22. Տուժողի իրավահաջորդը ցուցմունք է տվել գործը քննող դատարանում, որ 2000 թվականի հոկտեմբերի 7-ին իր ամուսինը՝ Ս.Մ.-ն, Գ.Թ.-ի հետ սրճարանում միջոցառման է մասնակցել: Այնուհետեւ ազգականները նրան հայտնել են, որ կռվի ժամանակ իր ամուսնուն դանակահարել են:

23. 2009 թվականի մայիսի 26-ի դատական նիստի ընթացքում դիմումատուն միջնորդություն է ներկայացրել՝ խնդրելով դատարանին հետազոտել գործի նյութերում ներառված՝ դեպքի վայրից տեսագրությունը: Նա պնդել է, որ անհրաժեշտ է պարզել դեպքին ականատես մյուս վկաների ինքնությունը, ինչպես նաեւ պարզել հանցագործության օրն իր հազուստի գույնը: Մարզային դատարանը մերժել է այդ միջնորդությունը:

24. 2009 թվականի հունիսի 19-ին մարզային դատարանը դիմումատուին մեղավոր է ճանաչել սպանության կատարման մեջ եւ նրան դատապարտել է ազատազրկման տասնչորս տարի ժամկետով: Այսպիսով, մարզային դատարանը, մասնավորապես, նշել է հետեւյալը.

«Դատարանը, հաշվի առնելով եւ հետազոտելով մեղադրանքը հիմնավորող ապացույցները, գտնում է, որ [դիմումատուի] մեղավորությունը հանցագործության կատարման մեջ հաստատվում է նախաքննությամբ ձեռք բերված եւ դատական քննության ընթացքում հետազոտված հետեւյալ ապացույցներով.

Տուժողի իրավահաջորդի [քննվող գործով] ցուցմունքներով ... այն մասին, որ 2000 թվականի հոկտեմբերի 7-ին՝ ժամը 20:00-ի սահմաններում, իր ամուսին Ս.Մ.-ն Գ.Թ.-ի հետ ... սրճարանում միջոցառման է մասնակցել: ... հարազատներից տեղեկացել է, որ սրճարանում տեղի ունեցած կռվի ժամանակ ... հայազգի տղաներ [Բ.Մ.-ն] եւ [դիմումատուն] դանակահարել են իր ամուսնուն ...

Վկա Խ.Հ.-ի ցուցմունքներով ... (դատարանը հրապարակել է վկա Խ.Հ.-ի նախաքննական ցուցմունքները)

Վկա Կ.Հ.-ի ցուցմունքներով ... (դատարանը հրապարակել է վկա Կ.Հ.-ի նախաքննական ցուցմունքները)

Վկա Գ.Թ.-ի ցուցմունքներով ... (դատարանը հրապարակել է վկա Գ.Թ.-ի նախաքննական ցուցմունքները)

Վկա Օ.Դ.-ի ցուցմունքներով ... (դատարանը հրապարակել է վկա Օ.Դ.-ի նախաքննական ցուցմունքները)

Վկա Վ.Հ.-ի ցուցմունքներով ... (դատարանը հրապարակել է վկա Վ.Հ.-ի նախաքննական ցուցմունքները)

Վկա Գ.Ա.-ի ցուցմունքներով ... (դատարանը հրապարակել է վկա Գ.Ա.-ի նախաքննական ցուցմունքները)

Վկա Ա.Օ.-ի ցուցմունքներով ... (դատարանը հրապարակել է վկա Ա.Օ.-ի նախաքննական ցուցմունքները)

Վկա Ա.Գ.-ի ցուցմունքներով ... (դատարանը հրապարակել է վկա Ա.Գ.-ի նախաքննական ցուցմունքները)

Վկա Վ.Կ.-ի ցուցմունքներով ... (դատարանը հրապարակել է վկա Վ.Կ.-ի նախաքննական ցուցմունքները)

Վկա Լ.Տ.-ի ցուցմունքներով ... (դատարանը հրապարակել է վկա Լ.Տ.-ի նախաքննական ցուցմունքները)

Վկա Ե.Բ.-ի ցուցմունքներով ... (դատարանը հրապարակել է վկա Ե.Բ.-ի նախաքննական ցուցմունքները)

[Դիմումատուի] մեղավորությունը ... հիմնավորվել է նաեւ.

Կոստանայի մարզային դատարանի 2006 թվականի մայիսի 29-ի դատավճռով ...

Վերը նշված քրեական գործով դատաքննության ժամանակ փորձագետ ... տված պարզաբանումներով ... ըստ որի դիակի վրա առկա են եղել դանակի երկու թափանցող վերքեր ... յուրաքանչյուր մարմնական վնասվածք առանձին կարող էր առաջացնել մահ:

Ֆիզիկատեխնիկական փորձաքննության եզրակացությամբ [Կոստանայի մարզային դատարանում գործի քննության ընթացքում] ...

... դատաբժշկական փորձաքննության 2000 թվականի հոկտեմբերի 31-ի եզրակացությամբ ... Ս.Մ.-ի մահվան պատճառ է հանդիսացել հետարյունահոսային սակավարյունությունը, որը զարգացել է լյարդի վնասվածքների հետեւանքով:

Դատաբժիշկ ... ցուցմունքով [Կոստանայի մարզային դատարանում գործի քննության ընթացքում] ... Յուրաքանչյուր դանակի հարվածի դեպքում վնասվել է լյարդը:

Ֆիզիկատեխնիկական փորձաքննության 2005 թվականի հոկտեմբերի 21-ի եզրակացությամբ, ըստ որի ... Ս.Մ.-ի պիջակի վրա հայտնաբերվել են երկու թափանցող հետքեր ... կարող էին պատճառվել ... դանակով:

Դեպքի վայրի զննության արձանագրություններով, տուժող Ս.Մ.-ի հագուստի ... զննության արձանագրություններով, միջոցառման նկարահանման երկու տեսանկյուններով, դեպքի վայրի զննության եւ դատաբժշկական փորձաքննություն իրականացնելիս դիակի զննման ընթացքում նկարահանումներ կատարելու տեսանկյուններով:» :

25. Դիմումատուն բողոք է ներկայացրել՝ պնդելով, *inter alia*, որ ո՛չ Ղազախստանում, ո՛չ Հայաստանում գործի քննության ընթացքում իր, Բ.Մ.-ի եւ իր դեմ ցուցմունք տված վկաների միջեւ ոչ մի առերեսում չի կատարվել: Նա բողոքում նաեւ նշել է, որ մարզային դատարանը վկաներին պատշաճ կարգով չի ծանուցել դատական նիստի վերաբերյալ եւ առանց բավարար հիմքերի հիմնվել է նրանց տված նախաքննական ցուցմունքների վրա: Նրա բողոքում ներկայացվել է

նաեւ այն փաստարկը, որ դատաքննության ժամանակ չեն հետազոտվել դեպքի վայրում նկարահանման տեսաերիզները, սակայն մարզային դատարանը հիմնվել է դրանց վրա՝ դրանք համարելով դիմումատուի դեմ ներկայացված ապացույցներ:

26. 2009 թվականի օգոստոսի 31-ին Վերաքննիչ քրեական դատարանը, հիմք ընդունելով միեւնոյն ապացույցները, օրինական ուժի մեջ է թողել դիմումատուի վերաբերյալ դատավճիռը: Ինչ վերաբերում է վկաների չներկայանալուն, ապա Վերաքննիչ դատարանը նշել է, որ գործի նյութերով հիմնավորվել է, որ վկաները պատշաճ կարգով ծանուցվել են դատական նիստի մասին, սակայն հայտարարություններ են ուղարկել ֆինանսական միջոցների բացակայության, ընտանեկան կամ աշխատանքային հանգամանքներով պայմանավորված՝ դատական նիստին չներկայանալու պատճառների վերաբերյալ՝ պնդելով նախաքննության ընթացքում իրենց տված ցուցմունքները:

27. Դիմումատուն վճռաբեկ բողոք է բերել՝ ներկայացնելով նույնատիպ փաստարկներ, որոնք բերվել էին նախկին բողոքում:

28. 2009 թվականի նոյեմբերի 12-ին Վճռաբեկ դատարանը դիմումատուի վճռաբեկ բողոքը հայտարարել է անընդունելի [վերադարձրել է] հիմքերի բացակայության պատճառով՝ նշելով, *inter alia*, որ իր դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու՝ դիմումատուի հնարավորության բացակայության մասով բողոքի վերաբերյալ Վերաքննիչ դատարանը հանգել է ճիշտ եզրակացության:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Քրեական դատավարության օրենսգիրք

29. 86-րդ հոդվածով (3-րդ եւ 4-րդ մասեր) նախատեսվում է, որ վկան պարտավոր է ցուցմունքներ տալու, քննչական եւ այլ դատավարական գործողությունների կատարմանը մասնակցելու համար ներկայանալ քրեական

վարույթն իրականացնող մարմնի կանչով: Վկայի կողմից իր պարտականությունները չկատարելն առաջ է բերում օրենքով նախատեսված պատասխանատվություն:

30. 105-րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել եւ որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել կասկածյալի եւ մեղադրյալի պաշտպանության իրավունքների խախտմամբ:

31. Վկան կարող է բերման ենթարկվել դատարանի պատճառաբանված որոշման հիման վրա եւ պարտավոր է տեղյակ պահել իրեն կանչած մարմնին նշանակված ժամկետում կանչով ներկայանալուն խոչընդոտող հարգելի պատճառների առկայության մասին (153-րդ հոդվածի 2-րդ մաս):

32. 216-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քննիչն իրավունք ունի կատարելու նախօրոք հարցաքննված երկու այն անձանց առերեսում, որոնց ցուցմունքներում էական հակասություններ կան: Քննիչը պարտավոր է կատարել առերեսում, եթե էական հակասություններ կան մեղադրյալի եւ մեկ այլ անձի ցուցմունքներում:

33. Դատական քննությանը հրավիրված վկաներից որեւէ մեկի չներկայանալու դեպքում դատարանը, լսելով կողմերի կարծիքը, որոշում է կայացնում գործի քննությունը շարունակելու կամ հետաձգելու մասին: Դատական քննությունը կարող է շարունակվել, եթե նշված անձանցից որեւէ մեկի չներկայանալը չի խոչընդոտի գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտմանը (332-րդ հոդվածի 1-ին մաս):

34. 342-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հետաքննության, նախաքննության կամ նախորդ դատական քննության ընթացքում վկայի տված ցուցմունքների հրապարակումը դատական քննության ժամանակ թույլատրվում է, երբ վկան դատական նիստից բացակայում է այնպիսի պատճառներով, որոնք բացառում են նրա՝ դատարան ներկայանալու հնարավորությունը, էական

հակասություններ կան այդ ցուցմունքների եւ դատարանում վկայի տված ցուցմունքների միջեւ, ինչպես նաեւ սույն օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:

35. 426.1 հոդվածի 1-ին մասում նշվում է, որ նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը: Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը (426.1 հոդվածի 2-րդ մաս):

36. 426.4 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ նոր հանգամանքների հետեւանքով դատական ակտերը կարող են վերանայվել, եթե միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը:

Բ. «Քաղաքացիական, ընտանեկան եւ քրեական գործերով իրավական օգնության եւ իրավական հարաբերությունների մասին» 1993 թվականի հունվարի 22-ի Մինսկի կոնվենցիա

37. «Քաղաքացիական, ընտանեկան եւ քրեական գործերով իրավական օգնության եւ իրավական հարաբերությունների մասին» 1993 թվականի հունվարի 22-ի Մինսկի կոնվենցիան Հայաստանի եւ Ղազախստանի համար ուժի մեջ է մտել 1994 թվականից: Այդ Կոնվենցիայի համապատասխան դրույթներն են.

Հոդված 9

Վկաներին, տուժողներին, քաղաքացիական հայցվորներին, քաղաքացիական պատասխանողներին, նրանց ներկայացուցիչներին, փորձագետներին կանչելը

«...»

3. Հարցնող [Հարցում ուղարկող] Պայմանավորվող կողմը վկային, փորձագետին, տուժողին եւ նրա օրինական ներկայացուցիչներին փոխհատուցում է այդ պետությունում գտնվելու եւ ուղեւորության հետ կապված ծախսերը, ինչպես նաեւ չաշխատած օրերի աշխատավարձը. փորձագետն ունի նաեւ կատարած փորձագիտության համար պարգևատրության իրավունք: Կանչում պետք է նշվի, թե ինչ վճարումներ ստանալու իրավունք ունեն կանչված անձինք. հարցնող Պայմանավորվող կողմի արդարադատության մարմինը նրանց միջնորդությամբ համապատասխան ծախսերը հոգալու կանխավճար է տալիս:

Հոդված 16

Հասցեների եւ այլ տվյալների պարզում

«1. Պայմանավորվող կողմերը, խնդրանքի դեպքում, իրենց օրենսդրությանը համապատասխան, միմյանց օգնություն են ցուցաբերում իրենց տարածքում բնակվող անձանց հասցեները պարզելու գործում, եթե դա պահանջվում է սեփական քաղաքացիների իրավունքների իրականացման համար ...»

Գ. «Քաղաքացիական, ընտանեկան եւ քրեական գործերով իրավական օգնության եւ իրավական հարաբերությունների մասին» 2002 թվականի հոկտեմբերի 7-ի Քիչնեւի կոնվենցիա

38. «Քաղաքացիական, ընտանեկան եւ քրեական գործերով իրավական օգնության ու իրավական հարաբերությունների մասին» 2002 թվականի

հոկտեմբերի 7-ի Քիշնեի կոնվենցիան, որը 1993 թվականի հունվարի 22-ի Մինսկի կոնվենցիայի շարունակությունն է եւ գերակայում է վերջինիս նկատմամբ, Հայաստանի եւ Ղազախստանի համար ուժի մեջ է մտել համապատասխանաբար 2005 եւ 2004 թվականներից: Այդ Կոնվենցիայի համապատասխան դրույթներն են.

Հոդված 12. Փաստաթղթերի վավերականությունը

«1. Այն փաստաթղթերը, որոնք Պայմանավորվող կողմերից մեկի տարածքում տրվել են կամ ավելացվել են իրավասու հիմնարկի կամ հատուկ դրա համար լիազորված անձի կողմից՝ նրա իրավասության շրջանակներում եւ սահմանված ձեւով եւ ամրագրված են զինանշանի պատկերով կնիքով, մյուս բոլոր Պայմանավորվող կողմերի տարածքներում ընդունվում են առանց որեւէ հատուկ հաստատման:

2. Այն փաստաթղթերը, որոնք Պայմանավորվող կողմերից մեկի տարածքում դիտվում են որպես պաշտոնական փաստաթղթեր, մյուս Պայմանավորվող կողմի տարածքներում օժտվում են պաշտոնական փաստաթղթերի ապացուցողական ուժով:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

39. Դիմումատուն բողոք է ներկայացրել առ այն, որ իրեն զրկել են իր դեմ ցուցմունք տված վկաներին քրեական գործով վարույթի որեւէ փուլում հարցաքննելու հնարավորությունից եւ որ իր դեմ ներկայացված ապացույցների մաս կազմող տեսաերիզները դատարանի կողմից չեն հետազոտվել: Նա պնդել է, որ խախտվել են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը եւ 3-րդ կետի «դ»

ենթակետը, որոնց համապատասխան դրույթներն ունեն հետեւյալ բովանդակությունը.

«1. Յուրաքանչյուր ոք, ... նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի ... դատարանի կողմիցարդարացի ... դատաքննության իրավունք:

...

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետեւյալ նվազագույն իրավունքները.

դ. հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, եւ իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու եւ հարցաքննելու միեւնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները:»

40. Կառավարությունը վիճարկել է այդ պնդումը:

Ա. Ընդունելիությունը

41. Դատարանը նշում է, որ այս բողոքները Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով ակնհայտ անհիմն չեն: Այն [Դատարանը] նաեւ նշում է, որ դրանք անընդունելի չեն որեւէ այլ հիմքով: Հետեւաբար, դրանք պետք է հայտարարվեն ընդունելի:

Բ. Գործի ըստ էության քննությունը

1. Չներկայացած վկաների ներկայացրած ապացույցների թույլատրելիությունը դիմումատուի վերաբերյալ գործով դատաքննության ժամանակ

ա) Կողմերի փաստարկները

42. Դիմումատուն պնդել է, որ ինքը դատապարտվել է հիմնականում այն վկաների ներկայացրած ապացույցների հիման վրա, որոնց նա հնարավորություն չի ունեցել հարցաքննելու վարույթի որեւէ փուլում: Մասնավորապես, պատշաճ կարգով դատարան չեն հրավիրվել այն բոլոր տասնմեկ վկաները, որոնց նախաքննական ցուցմունքները գործը քննող դատարանը դրել է դատավճռի հիմքում: Մարզային դատարանը չի պարզել՝ արդյոք այդ վկաներն իրականում ստացել են իրենց ծանուցագրերը, ինչը, փաստացի, տեղի չի ունեցել: Ինչ վերաբերում է մի քանի, բայց ոչ բոլոր վկաների ներկայացրած հայտարարություններին, ապա դրանցում նշված պատճառները, մասնավորապես՝ ֆինանսական միջոցների բացակայությունը, աշխատանքային կամ ընտանեկան հանգամանքները, չէին կարող համարվել դատական քննությանը չներկայանալու հարգելի պատճառներ:

43. Կառավարությունը պնդել է, որ մեղադրանքի կողմի բոլոր վկաները պատշաճ կարգով ծանուցվել են դիմումատուի վերաբերյալ գործով դատական քննության մասին: [Կառավարության կողմից] Ներկայացվել են դատական ծանուցագրերը, որոնցով տասնմեկ վկաներին ծանուցվել է 2009 թվականի ապրիլի 3-ի, 16-ի եւ 29-ի նիստերի վերաբերյալ, ինչպես նաեւ այն ծանուցագրերը, որոնցով նրանցից վեցին ծանուցվել է 2009 թվականի մայիսի 13-ի նիստի վերաբերյալ: Կառավարությունը պնդել է, որ գործը քննող դատարանը պատշաճորեն հետազոտել է ութ վկաների ներկայացրած հայտարարություններն առ այն, որ իրենք տարբեր պատճառներով հնարավորություն չեն ունեցել ներկայանալու դիմումատուի վերաբերյալ գործով դատական քննությանը: Ավելին, այդ հայտարարություններում, որոնք նոտարական կարգով վավերացվել են Ղազախստանում եւ, հետեւաբար, Հայաստանում համարվում են վավեր փաստաթղթեր, նրանք խնդրել են որպես ապացույց ճանաչել իրենց նախաքննական ցուցմունքները: Կառավարությունը նաեւ պնդել է, որ չներկայացած վկաների տված նախաքննական ցուցմունքները դիմումատուի դեմ

միակ եւ վճռորոշ ապացույցը չեն: Նրանց ներկայացրած ապացույցներից բացի՝ դիմումատուն դատապարտվել է Բ.Մ.-ի գործով Կոստանայի մարզային դատարանի դատավճռի, դատական փորձաքննությունների, քննչական գործողությունների արդյունքների եւ փորձագետների հարցաքննությունների արձանագրությունների հիման վրա, որոնք հրապարակվել են դատական քննության ժամանակ, ինչպես նաեւ դատական քննության ժամանակ տուժողի իրավահաջորդի տված ցուցմունքների հիման վրա:

բ) Դատարանի գնահատականը

i) Ընդհանուր սկզբունքները

44. Դատարանը վերահաստատում է, որ 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով սահմանված երաշխիքներն այդ դրույթի 1-ին կետով սահմանված՝ արդար դատաքննության իրավունքի հատուկ ասպեկտներ են (տե՛ս *Ալ-Խավաջան եւ Թահերին ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ] [*Al-Khawaja and Tahery v. the United Kingdom* [GC]], թիվ 26766/05 եւ 22228/06, § 118, ՄԻԵԴ 2011), հետեւաբար, այն դիմումատուի բողոքը կքննի՝ հիմք ընդունելով այդ երկու դրույթները՝ դրանք դիտարկելով համատեղ (տե՛ս *Վինդիշն ընդդեմ Ավստրիայի* [*Windisch v. Austria*], 1990 թվականի սեպտեմբերի 27, § 23, Շարք «Ա» թիվ 186):

45. Դատարանը նաեւ վերահաստատում է, որ բոլոր ապացույցները սովորաբար պետք է ներկայացվեն դռնբաց դատական քննության ժամանակ մեղադրյալի ներկայությամբ՝ մրցակցային դատավարության սկզբունքի պահպանմամբ փաստարկներ ներկայացնելու հնարավորությունն ապահովելու համար: Այս սկզբունքից բացառություններ կան, սակայն դրանք չպետք է խախտեն պաշտպանության կողմի իրավունքները. որպես կանոն, 6-րդ հոդվածի 1-ին կետով եւ 3-րդ կետի «դ» ենթակետով պահանջվում է, որ ամբաստանյալին համարժեք եւ պատշաճ հնարավորություն տրվի վկայի՝ իր դեմ տված ցուցմունքի թույլատրելիությունը վիճարկելու կամ իր դեմ ցուցմունք տված վկային հարցաքննելու՝ վկայի կողմից ցուցմունք տալու ժամանակ կամ հետագա փուլերում (տե՛ս *Խոդորկովսկին եւ Լեբեդեն ընդդեմ Ռուսաստանի* [*Khodorkovskiy*

and Lebedev v. Russia], թիվ 11082/06 եւ 13772/05, § 707, 2013 թվականի հուլիսի 25):

46. *Ալ-Խավաջայի եւ Թահերիի* գործում, որը հիշատակված է վերելում՝ 119-147-րդ պարբերություններում, Մեծ պալատը հստակեցրել է այն սկզբունքները, որոնք պետք է կիրառվեն այն դեպքում, երբ վկան դռնբաց դատական քննությանը չի ներկայանում: Այդ սկզբունքները կարող են ամփոփ ներկայացվել հետեւյալ կերպ՝

i) Դատարանը նախապատրաստական փուլում նախ պետք է քննի այն հարցը, թե արդյոք հիմնավոր պատճառ կա չներկայացած վկայի տված ցուցմունքը որպես ապացույց ճանաչելու համար՝ հաշվի առնելով, որ վկաները պետք է, որպես կանոն, ցուցմունք տան դատական քննության ժամանակ, եւ որ պետք է ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ նրանց ներկայանալն ապահովելու համար.

ii) չներկայանալու ամենահաճախ հանդիպող պատճառներն են, օրինակ, ինչպես *Ալ-Խավաջայի եւ Թահերիի* գործում (վերելում հիշատակված), վկայի մահը կամ վախը վրեժխնդրությունից: Այնուամենայնիվ, վկան դատական քննությանը կարող է չներկայանալ նաեւ օրինական պատճառներով.

iii) եթե վկան չի հարցաքննվել վարույթի նախորդ փուլերում, ապա դատական քննության ժամանակ դատարանում ցուցմունք տալու փոխարեն վկայի՝ նախկինում տված ցուցմունքը որպես ապացույց ճանաչելը պետք է հանդիսանա ծայրահեղ միջոց.

iv) չներկայացած վկաների՝ նախկինում տված ցուցմունքը որպես ապացույց ճանաչելն անբարենպաստ հետեւանքներ է առաջացնում ամբաստանյալի համար, որը, ըստ էության, քրեական դատավարության ընթացքում պետք է արդյունավետ հնարավորություն ունենա իր դեմ ներկայացված ապացույցների թույլատրելիությունը վիճարկելու: Մասնավորապես, նա պետք է կարողանա ստուգել վկայի ներկայացրած ապացույցների ճշմարտացիությունը եւ

հավաստիությունը՝ դրանք վկայի ներկայությամբ բանավոր քննելու միջոցով՝ վկայի կողմից ցուցմունք տալու ժամանակ կամ վարույթի հետագա փուլերում.

v) «միակ կամ վճռորոշ ցուցմունքի սկզբունքի» համաձայն՝ այն դեպքում, երբ ամբաստանյալը դատապարտվում է բացառապես կամ հիմնականում այն վկաների տված ցուցմունքների հիման վրա, որոնց մեղադրյալը չի կարող հարցաքննել դատավարության փուլերից որեւէ մեկում, նրա պաշտպանության իրավունքներն անհիմն կերպով սահմանափակվում են.

vi) այս համատեքստում «վճռորոշ» բառը պետք է նշանակի միայն այնպիսի նշանակության կամ կարեւորության ցուցմունք, որը կարող է որոշել գործի ելքը: Եթե վկայի չստուգված ցուցմունքը հիմնավորվում է այլ հաստատված ապացույցներով, ապա դրա վճռորոշ լինելու հանգամանքը գնահատելը կախված կլինի հիմնավորող ապացույցների նշանակությունից. որքան հավաստի են մեղավորությունը հաստատող մյուս ապացույցները, այնքան քիչ հավանական է, որ չներկայացած վկայի ցուցմունքը կհամարվի վճռորոշ.

vii) այնուամենայնիվ, քանի որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետը պետք է մեկնաբանվի դատաքննության արդարացիության ընդհանուր ուսումնասիրության համատեքստում, միակ կամ վճռորոշ ցուցմունքի սկզբունքը չպետք է կիրառվի ոչ ճկուն եղանակով.

viii) մասնավորապես, եթե ուրիշի խոսքի վրա հիմնված ցուցմունքը միակ կամ վճռորոշ ապացույցն է ամբաստանյալի դեմ, ապա այն որպես ապացույց ճանաչելն ինքնըստինքյան չի հանգեցնի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման: Միեւնույն ժամանակ, եթե դատապարտման համար միակ կամ վճռորոշ հիմք են չներկայացած վկաների ցուցմունքները, ապա Դատարանը պետք է դատական քննությունը հանգամանորեն ուսումնասիրի: Պայմանավորված այն վտանգներով, որոնք կարող են առաջանալ՝ այդպիսի ցուցմունքները որպես ապացույց ճանաչելու հետեւանքով, դա շատ կարեւոր գործոն կհանդիսանա հավասարակշռությունն ապահովելու հարցում, եւ դրա համար անհրաժեշտ

կլինեն հակակշռող բավարար գործոններ, այդ թվում՝ հուսալի ընթացակարգային երաշխիքներ: Յուրաքանչյուր դեպքում հարցն այն է, թե արդյոք առկա են բավարար հակակշռող գործոններ, այդ թվում՝ միջոցներ, որոնք թույլ կտան արդարացի եւ պատշաճ ձեւով գնահատել այդ ցուցմունքների հավաստիությունը՝ դրանք որպես ապացույց ճանաչելու համար: Սա թույլ կտա, որ անձը դատապարտվի այդպիսի ցուցմունքների հիման վրա միայն այն դեպքում, երբ դրանք բավականաչափ հավաստի լինեն՝ հաշվի առնելով գործի համար դրանց կարելիությունը:

47. Այս սկզբունքները մանրամասնորեն պարզաբանվել են *Շաչաշվիլիի* գործում (տե՛ս *Շաչաշվիլին ընդդեմ Գերմանիայի* [ՄՊ] [*Schtschaschwili v. Germany* [GC]], թիվ 9154/10, §§ 111 – 131, ՄԻԵԴ 2015), որում Մեծ պալատը հաստատեց, որ վկայի չներկայանալու համար հիմնավոր պատճառի բացակայությունը չի կարող ինքնին վկայել դատաքննության անարդարացի լինելու մասին, թեեւ ընդհանուր արդարացիությունը գնահատելիս այն ամեն դեպքում կարելի է գործոն է՝ հավասարակշռությունը որոշելու համար եւ կարող է որոշիչ դեր ունենալ 6-րդ հոդվածի 1-ին կետի եւ 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում արձանագրելու հարցում: Ավելին, հաշվի առնելով, որ Դատարանի խնդիրն է պարզել՝ արդյոք դատաքննությունն ընդհանուր առմամբ արդարացի է եղել, այն պետք է ուսումնասիրի ոչ միայն բավարար հակակշռող գործոնների առկայությունը այն գործերում, որոնցում չներկայացած վկայի ցուցմունքը միակ կամ վճռորոշ հիմքն է եղել դիմումատուին դատապարտելու համար, այլ նաեւ այն գործերում, որոնցում այն չի կարողացել հստակ պարզել՝ արդյոք խնդրո առարկա ցուցմունքը միակը եւ վճռորոշն է եղել, սակայն, այնուհանդերձ, համոզվել է, որ այն կարելի է նշանակություն է ունեցել եւ այն որպես ապացույց ճանաչելը, հնարավոր է, սահմանափակել է պաշտպանության կողմի հնարավորությունները: Հակակշռող գործոնների՝ դատաքննությունն արդար համարելու համար անհրաժեշտ շրջանակը կախված է չներկայացած վկայի ցուցմունքի նշանակությունից: Որքան կարելի է նշանակություն ունենա այդ ցուցմունքը,

այնքան ավելի կարելի է նշանակություն պետք է ունենան հակակշռող գործոնները, որպեսզի դատաքննությունն ընդհանուր առմամբ համարվի արդարացի (տե՛ս Սեթոնն ընդդեմ Միացյալ Թագավորության [*Seton v. the United Kingdom*], թիվ 55287/10, §§ 58 եւ 59, 2016 թվականի մարտի 31):

ii) Այդ սկզբունքների կիրառումը սույն գործի նկատմամբ

α) Արդյոք վկաների՝ դատական քննությանը չներկայանալու համար եղել են հիմնավոր պատճառներ

48. Դատարանը նշում է, որ դիմումատուն Հայաստանի Հանրապետության դատարանների կողմից դատապարտվել է Ղազախստանի Հանրապետության տարածքում սպանություն կատարելու համար, որտեղ քրեական գործի նախաքննությունը կատարվել է առանց դիմումատուի մասնակցության: Սպանությունը կատարվել է հասարակական վայրում միջոցառման ժամանակ՝ մի շարք անձանց ներկայությամբ: Այս անձինք, մասնավորապես՝ Խ.Հ.-ն, Գ.Թ.-ն, Օ.Դ.-ն, Վ.Հ.-ն եւ Գ.Ա.-ն, Ղազախստանի Հանրապետությունում գործով վարույթի ընթացքում հարցաքննության ժամանակ դիմումատուին եւ Բ.Մ.-ին մատնանշել են որպես տուժողին դանակով հարվածողների: Մյուս ականատեսները, մասնավորապես՝ Ա.Օ.-ն, Ա.Գ.-ն, Վ.Կ.-ն, Լ.Տ.-ն եւ Ե.Բ.-ն, որոնք նույնպես հարցաքննվել են Ղազախստանի Հանրապետության քննչական մարմինների կողմից, տեղի ունեցածը նկարագրել են առանց դիմումատուին մատնանշելու՝ որպես արարքը ենթադրաբար կատարողի, մինչդեռ Լ.Տ.-ն ճանաչել է նրան, երբ իրեն ցույց են տվել նրա լուսանկարը (տե՛ս վերոնշյալ 7-րդ պարբերությունը): Դատարանը նաեւ նշում է, որ այդ տասնմեկ վկաներից ոչ մեկը չի ներկայացել դիմումատուի դատական քննությանը:

49. Դատարանի դիտարկմամբ՝ առաջին ատյանի դատարանը չի պատճառաբանել չներկայացած վկաների ցուցմունքները որպես ապացույց ճանաչելը, իսկ Վերաքննիչ դատարանը հիմնվել է նրանց ներկայանալը չապահովելու վերաբերյալ այն պատճառաբանության վրա, որ նրանք պատշաճ

կարգով ծանուցվել են առաջին ատյանի դատարանի կողմից, սակայն նշել են, որ չեն կարող ներկայանալ ֆինանսական միջոցների բացակայության, ընտանեկան եւ աշխատանքային հանգամանքների հետ կապված պատճառներով (տե՛ս վերոնշյալ 26-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, Դատարանը համոզիչ չի համարում այն, որ դա կարող էր հիմնավոր պատճառաբանություն լինել այդ վկաներին չհարցաքննելու եւ նրանց ցուցմունքները որպես ապացույց ճանաչելու համար: Մասնավորապես, այն փաստը, որ ներպետական դատարանները չեն կարողացել պարզել տվյալ վկայի գտնվելու վայրը կամ այն փաստը, որ վկան բացակայել է այն երկրից, որտեղ իրականացվել է գործով վարույթը, ինքնին բավարար չեն համարվել՝ բավարարելու համար 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի պահանջները, որոնց համաձայն՝ Պայմանավորվող պետությունները պետք է դրական քայլեր ձեռնարկեն՝ մեղադրյալին հնարավորություն ընձեռելով հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության (տե՛ս *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի* [*Gabrielyan v. Armenia*], թիվ 8088/05, § 81, 2012 թվականի ապրիլի 10, *Լուչիչն ընդդեմ Խորվաթիայի* [*Lučić v. Croatia*], թիվ 5699/11, § 79, 2014 թվականի փետրվարի 27): Այդ քայլերը Պայմանավորվող պետությունների կողմից կատարման ենթակա այն պարտավորությունների մաս են կազմում, որոնք ուղղված են 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներից արդյունավետորեն օգտվելու հնարավորությունն ապահովելուն (տե՛ս *Գաբրիելյանի* գործը, վերետում հիշատակված, § 81, հաջորդող հղումների հետ միասին): Հակառակ դեպքում՝ վկայի չներկայանալը պետք է վերագրել ներպետական իշխանություններին (տե՛ս *Յեբերն ընդդեմ Չեխիայի Հանրապետության* [*Tseber v. the Czech Republic*], թիվ 46203/08, § 48, 2012 թվականի նոյեմբերի 22, եւ *Լուչիչի* գործը, վերետում հիշատակված, § 79):

50. Դատարանն ընդունում է, որ առաջին ատյանի դատարանը որոշակի քայլեր է ձեռնարկել՝ վկաների ներկայանալն ապահովելու համար: Այսպիսով, Կառավարության կողմից ներկայացված փոստային անդորրագրերի համաձայն՝

Ղազախստանի Հանրապետության համապատասխան մարմինների կողմից կատարված նախաքննության ժամանակ հարցաքննված տասնմեկ վկաները կանչվել են առաջին ատյանի դատարանի առնվազն երեք նիստի: Այնուամենայնիվ, միայն վկաներ Լ.Տ.-ն, Օ.Դ.-ն եւ Խ.Հ.-ն են ստացել մեկ կամ ավելի դատական ծանուցագիր: Դատարանը նշում է, որ տասնմեկ վկաներից ութն առաջին ատյանի դատարան են ներկայացրել Ղազախստանում նոտարական կարգով վավերացված գրավոր հայտարարություններ, որոնցում նշել են իրենց՝ դատական քննությանը չներկայանալու մի շարք պատճառներ եւ խնդրել են դատարաններին որպես ապացույց ճանաչել նախաքննության ժամանակ տված իրենց ցուցմունքները: Մասնավորապես, վկաներ Վ.Հ.-ն եւ Ե.Բ.-ն նշել են, որ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով չեն կարող ներկայանալ դատական քննությանը, վկա Օ.Դ.-ն նշել է ընտանեկան հանգամանքների հետ կապված պատճառ, իսկ վկաներ Ա.Գ.-ն, Գ.Թ.-ն, Վ.Կ.-ն, Լ.Տ.-ն եւ Կ.Հ.-ն նշել են, որ չեն կարող ներկայանալ աշխատանքային հանգամանքների հետ կապված պատճառով: Բացի աշխատանքային հանգամանքներից՝ վկաներ Լ.Տ.-ն եւ Կ.Հ.-ն նշել են նաեւ ֆինանսական միջոցների բացակայությունը: Բավարար չափով պարզ չէ, թե դատական ծանուցագրեր չստացած վկաներից մի քանիսն ինչպես են ծանուցվել դիմումատուի դատական քննության վերաբերյալ եւ ներկայացրել համապատասխան հայտարարությունները: Այնուամենայնիվ, Դատարանը հաշվի է առնում այն փաստը, որ առնվազն ութ վկա ծանուցվել է Հայաստանում դիմումատուի վերաբերյալ գործով դատական քննության վերաբերյալ, իսկ վկա Խ.Վ.-ն, ստանալով դատական ծանուցագիրը, չի ներկայացրել դատական քննությանը եւ չի ներկայացրել այնպիսի հայտարարություն, ինչպիսին ներկայացվել է մյուսների կողմից:

51. Դատարանը համոզված չէ, որ բոլոր հնարավոր միջոցները կարելի է համարել ձեռնարկված՝ վկաներ Խ.Հ.-ի, Կ.Հ.-ի, Գ.Թ.-ի, Օ.Դ.-ի, Վ.Հ.-ի, Գ.Ա.-ի, Ա.Օ.-ի, Ա.Գ.-ի, Վ.Կ.-ի, Լ.Տ.-ի եւ Ե.Բ.-ի ներկայանալն ապահովելու համար:

Առաջին ատյանի դատարանը կարող էր հիմնվել միջազգային իրավական օգնության վրա՝ 1993 թվականի հունվարի 22-ի Մինսկի կոնվենցիային համապատասխան (տե՛ս վերոնշյալ 37-րդ պարբերությունը), որի մասնակից են եւ՛ Հայաստանի Հանրապետությունը, եւ՛ Ղազախստանի Հանրապետությունը: Ավելին, Հայաստանի Հանրապետության դատարանները հեշտությամբ ընդունել են ութ վկաների կողմից ներկայացված հայտարարություններում նշված պատճառները, այսինքն՝ այն, որ նրանք չեն կարողացել ներկայանալ դիմումատուի վերաբերյալ գործով դատական քննությանը ֆինանսական միջոցների բացակայության, ընտանեկան կամ աշխատանքային հանգամանքների հետ կապված պատճառներով՝ առանց նույնիսկ քննելու նրանց ճանապարհի եւ կեցության ծախսերը հատուցելու հնարավորությունը, որը նախատեսվում է վերոնշյալ Մինսկի կոնվենցիայով (նույն տեղում): Այսպիսով, չի կարելի ասել, որ վկաներ Խ.Հ.-ին, Կ.Հ.-ին, Գ.Թ.-ին, Օ.Դ.-ին, Վ.Հ.-ին, Գ.Ա.-ին, Ա.Օ.-ին, Ա.Գ.-ին, Վ.Կ.-ին, Լ.Տ.-ին եւ Ե.Բ.-ին չհարցաքննելու համար հիմնավոր պատճառներ են եղել: Սակայն հարցը միայն նրանց՝ դիմումատուի վերաբերյալ գործով դատական քննությանը չներկայանալու համար հիմնավոր պատճառի բացակայությունը չէ: Միայն այս հանգամանքն ինքնին չի վկայում քրեական դատավարության անարդարացի լինելու մասին, թեեւ այն շատ կարելի է գործոն է՝ մյուս համապատասխան հանգամանքների հետ ընդհանուր հավասարակշռությունը որոշելու համար (տե՛ս *Շաչաշվիլի* գործը, վերետում հիշատակված, § 113):

β) Արդյոք չներկայացած վկայի ցուցմունքը «միակը եւ վճռորոշն է» եղել

52. Ինչ վերաբերում է թեստի երկրորդ փուլին, ապա Դատարանը նշում է, որ դիմումատուի մեղավորությունը հիմնավորելիս առաջին ատյանի դատարանն ակնհայտորեն հղում է կատարել չներկայացած տասնմեկ վկաների ցուցմունքներին (տե՛ս վերոնշյալ 24-րդ պարբերությունը): Կասկած չի հարուցում այն, որ, ինչպես նշել է Կառավարությունը, այդ ցուցմունքները միակ ապացույցը չեն եղել, որի վրա հիմնվելով՝ առաջին ատյանի դատարանը կայացրել է

դատավճիռը (նույն տեղում): Դատարանն այդ պատճառով պետք է պարզի՝ արդյոք չներկայացած վկաների ցուցմունքները «վճռորոշ» են եղել դիմումատուի դատապարտման համար (տե՛ս *Շաշաշվիլիի* գործը, վերելում հիշատակված, § 123 եւ *Ալ-Խավաշայի ու Թահերիի* գործը, վերելում հիշատակված, § 131): Ելնելով այն հանգամանքից, որ ներպետական դատարաններն այս հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումը չեն հայտնել, Դատարանը պետք է ինքը գնահատի այդ վկաների ցուցմունքների նշանակությունը՝ հաշվի առնելով մեղավորությունը հաստատող առկա լրացուցիչ ապացույցները (տե՛ս *Շաշաշվիլիի* գործը, վերելում հիշատակված, § 143, *Պոլեդանը եւ Ազիրովիկն ընդդեմ Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետության* [*Poletan and Azirovik v. the former Yugoslav Republic of Macedonia*], թիվ 26711/07, 32786/10 եւ 34278/10, § 88, 2016 թվականի մայիսի 12):

53. Դատարանն այս առնչությամբ նշում է, որ մեղավորությունը հաստատող լրացուցիչ ապացույցները, որոնք առաջին ատյանի դատարանը հիմք է ընդունել դիմումատին դատապարտելիս, ներառում են տուժողի իրավահաջորդի՝ առաջին ատյանի դատարանում տված ցուցմունքները, դիմումատուի հանցակցի վերաբերյալ Կոստանայի մարզային դատարանի 2006 թվականի մայիսի 29-ի դատավճիռը, Ղազախստանի Հանրապետությունում վերջինիս վերաբերյալ գործով դատական քննության ժամանակ փորձագետների տված ցուցմունքները, փորձաքննությունների եզրակացությունները, Ղազախստանի Հանրապետությունում կատարված մի շարք քննչական գործողությունների արձանագրությունները եւ միջոցառման նկարահանման տեսանկյունները: Հաշվի առնելով այս ապացույցները՝ Դատարանը չի կարող չնշել, որ միայն վկաներ Խ.Հ.-ն, Կ.Հ.-ն, Գ.Թ.-ն, Օ.Դ.-ն, Վ.Հ.-ն, Գ.Ա.-ն, Ա.Օ.-ն, Ա.Գ.-ն, Վ.Կ.-ն, Լ.Տ.-ն եւ Ե.Բ.-ն են եղել հանցագործության ականատեսները, մինչդեռ տուժողի իրավահաջորդը, թեեւ հարցաքննվել է դիմումատուի վերաբերյալ գործով դատաքննության ժամանակ, անձամբ ականատես չի եղել հանցագործությանը: Առկա մյուս ապացույցներով չի հաստատվել այն փաստը, որ Ս.Մ.-ին

դանակահարել է դիմումատուն: Դատարանն այդ պատճառով կարծում է, որ դիմումատուի դատապարտման համար «վճռորոշ» են եղել չներկայացած վկաների ցուցմունքները:

յ) Արդյոք եղել են բավարար «հակակշռող գործոններ»

54. Դատարանն ի վերջո պետք է որոշի՝ արդյոք եղել են բավարար հակակշռող գործոններ, այդ թվում՝ միջոցներ, որոնք թույլ են տվել արդարացիորեն եւ պատշաճորեն գնահատել չներկայացած վկաների տված ցուցմունքների հավաստիությունը:

55. Դատարանը նշում է, որ դիմումատուն գործով վարույթի որեւէ փուլում տվյալ վկաներին հարցաքննելու հնարավորություն չի ունեցել: Ճիշտ է, որ դիմումատուն չի մասնակցել Ղազախստանի Հանրապետությունում իր դեմ հարուցված քրեական գործի քննությանն այնպիսի պատճառներով, որոնք չի կարելի վերագրել իշխանություններին: Այդ պատճառով նա հնարավորություն չի ունեցել խաչաձեւ հարցաքննելու վկաներին ո՛չ մինչդատական փուլում, երբ նրանք ցուցմունք են տվել, ո՛չ էլ Ղազախստանի Հանրապետությունում գործի քննության հետագա փուլերում: Դատարանն, այնուամենայնիվ, նշում է, որ դիմումատուն ի վերջո զրկվել է այդ վկաներին Հայաստանում իր դեմ հարուցված քրեական գործի քննության, այդ թվում՝ դատական քննության ընթացքում հարցաքննելու հնարավորությունից: Դատարանը նաեւ նշում է, որ դատավարական որեւէ միջոցառում չի ձեռնարկվել՝ դատական քննության ժամանակ վկաներին խաչաձեւ հարցաքննելու հնարավորության բացակայությունը որեւէ կերպ լրացնելու համար: Ավելին, առաջին ատյանի դատարանը պատշաճ կարգով չի գնահատել այն, թե որքանով կարելի է վստահել չներկայացած վկաներին եւ հավաստի համարել նրանց ցուցմունքները, եւ դրանք պարզապես դասել է այն ապացույցների թվին, որոնք հաստատում են դիմումատուի մեղավորությունը (տե՛ս վերոնշյալ 24-րդ պարբերությունը):

56. Վերոնշյալ դատողությունները բավարար են, որպեսզի Դատարանը եզրակացնի, որ անհիմն կերպով սահմանափակվել է դիմումատուի՝ այն վկաներին հարցաքննելու իրավունքը, որոնց վկայությունները վճռորոշ դեր են ունեցել իր դատապարտման հարցում:

57. Ըստ այդմ, այս առումով տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ համատեղ:

2. *Առաջին ատյանի դատարանի կողմից տեսաերիզների հետազոտումը մերժելը*

ա) Կողմերի փաստարկները

58. Դիմումատուն պնդել է, որ երկու տեսաերիզները, որոնք չեն հետազոտվել առաջին ատյանի դատարանի կողմից, որպես իր մեղավորությունը հաստատող ապացույցներ՝ դրվել են մեղադրական դատավճռի հիմքում: Առաջին ատյանի դատարանը մերժել է այդ տեսաերիզների հետազոտումը՝ չնայած որ պաշտպանության կողմը հստակ միջնորդություն էր ներկայացրել՝ ելնելով այն հանգամանքից, որ դրանց հետազոտումը կարող էր նպաստել գործի հանգամանքները պարզելուն՝ ներառյալ այն հանգամանքը, թե ով է ներկա եղել միջոցառմանը եւ թե դիմումատուն այդ օրն ինչ հագուստով է եղել:

59. Կառավարությունը պնդել է, որ տեսաերիզները չհետազոտելու հանգամանքը չի ազդել դիմումատուի դատաքննության արդարացիության վրա: Այն փաստերը, որոնք դիմումատուն ցանկանում էր հաստատել, արդեն իսկ հաստատվել էին Կոստանայի մարզային դատարանի 2006 թվականի մայիսի 29-ի դատավճռով, որը, Մինսկի եւ Քիշնեւի կոնվենցիաների համաձայն, Հայաստանի Հանրապետությունում ապացուցողական ուժ ունեցող պաշտոնական փաստաթուղթ է:

բ) Դատարանի գնահատականը

60. Դատարանը վերահաստատում է, որ արդարացի դատաքննության հասկացությունը ենթադրում է, *inter alia*, մրցակցության սկզբունքի հիման վրա

իրականացվող դատավարության իրավունքը, ինչը քրեական գործի դեպքում նշանակում է, որ եւ՛ մեղադրանքի, եւ՛ պաշտպանության կողմերին պետք է հնարավորություն տրվի ծանոթանալու մյուս կողմի ներկայացրած փաստարկներին ու ապացույցներին եւ մեկնաբանելու դրանք (տե՛ս *Բրանդշթեթերն ընդդեմ Ավստրիայի* [*Brandstetter v. Austria*], 1991 թվականի օգոստոսի 28, § 67, Շարք «Ա» թիվ 211): Այս առնչությամբ Դատարանը նշում է, որ հնարավոր է՝ դատավարական այնպիսի իրավիճակը, երբ մի կողմի համար հակառակ կողմի համեմատ անբարենպաստ պայմաններ չեն ստեղծվում, լինի մրցակցության սկզբունքի հիման վրա իրականացվող դատավարության իրավունքի խախտում, եթե տվյալ կողմին չի տրվել ներկայացված բոլոր ապացույցներին կամ փաստարկներին ծանոթանալու եւ դրանք մեկնաբանելու հնարավորություն, ինչը թույլ կտար ազդել դատարանի որոշման վրա (տե՛ս *Կրչմարը եւ այլոք ընդդեմ Չեխիայի Հանրապետության* [*Krčmář and Others v. the Czech Republic*], թիվ 35376/97, §§ 38-46, 2000 թվականի մարտի 3 եւ *Գրեգաչեվիչն ընդդեմ Խորվաթիայի* [*Gregačević v. Croatia*], թիվ 58331/09, § 50, 2012 թվականի հուլիսի 10):

61. Դատարանը նշում է, որ առաջին ատյանի դատարանն իր կայացրած դատավճռում խնդրո առարկա երկու տեսաերիզները դասել է հանցագործությունը կատարելու մեջ դիմումատուի մեղավորությունը հաստատող մյուս ապացույցների թվին (տե՛ս վերոնշյալ 24-րդ պարբերությունը)՝ առանց որեւէ պատճառաբանության, որը թույլ կտար Դատարանին որոշել այդ ապացույցի ապացուցողական նշանակությունը: Դատարանը նաեւ նշում է, որ պաշտպանության կողմը միջնորդել է, որ այդ տեսաերիզները հետազոտվեն՝ պնդելով, որ դրանք առաջին ատյանի դատարանին կօգնեն պարզելու որոշ հանգամանքներ, որոնք, իր կարծիքով, կարող էին ազդել առաջին ատյանի դատարանի որոշման վրա:

62. Ներպետական դատարանների կողմից տեսաերիզների ապացուցողական նշանակության վերաբերյալ հիմնավորումների

բացակայության պարագայում Դատարանը չի ցանկանում անդրադառնալ այն հարցին, թե որքանով են տեսաերիզներն ազդել առաջին ատյանի դատարանի որոշման վրա: Այնուամենայնիվ, Դատարանը նշում է, որ նշվածները դեպքի օրը սրճարանում կատարված նկարահանումների տեսաերիզներ են, եւ դրանք ճանաչվել են որպես իրեղեն ապացույց դիմումատուի դեմ՝ առանց առաջին ատյանի դատարանի կողմից դատական քննության ընթացքում հետազոտվելու, եւ այս հանգամանքը զրկել է պաշտպանության կողմին դրանց վերաբերյալ փաստարկներ ներկայացնելու հնարավորությունից:

63. Կառավարությունը պնդել է, որ այն փաստերը, որոնք ենթադրաբար հաստատելու համար անհրաժեշտ էր տեսաերիզների հետազոտումը, արդեն իսկ հաստատվել էին Կոստանայի մարզային դատարանի 2006 թվականի մայիսի 29-ի դատավճռով: Դատարանն այնուամենայնիվ նշում է, որ այս դատավճիռը վերաբերել է Ղազախստանի Հանրապետության առաջին ատյանի դատարանի կողմից ապացույցների, այդ թվում՝ խնդրո առարկա տեսաերիզների գնահատման հիման վրա դիմումատուի հանցակցի դատապարտմանը: Դատարանը նաեւ նշում է, որ գործի նյութերում ոչինչ չի վկայում այն մասին, որ Ղազախստանի Հանրապետության՝ նախաքննությունը կատարած մարմինների կողմից փոխանցված ապացույցներից բացի, որեւէ նոր ապացույց է ձեռք բերվել Հայաստանի Հանրապետության նախաքննական մարմնի կողմից (տե՛ս վերոնշյալ 13-րդ, 14-րդ, 15-րդ եւ 16-րդ պարբերությունները): Այնուամենայնիվ, Դատարանի կարծիքով՝ այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի դատարանը չի հետազոտել տեսաերիզները՝ այդ ապացույցն անձամբ գնահատելու համար, չի համապատասխանում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ մրցակցության սկզբունքի հիման վրա իրականացվող դատավարության պահանջներին՝ հաշվի առնելով, որ պաշտպանության կողմն ի վերջո զրկվել է այդ ապացույցը մեկնաբանելու բոլոր հնարավորություններից:

64. Ուստի, այս առումով նույնպես տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

65. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական օրենսդրությունն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել:»:

Ա. Վնասը

66. Դիմումատուն, որպես ոչ նյութական վնասի հատուցում, պահանջել է 50,000 եվրո:

67. Կառավարությունը պնդել է, որ խախտում արձանագրելը բավարար արդար փոխհատուցում կհանդիսանա: Ամեն դեպքում, դիմումատուի պահանջները չափազանցված են:

68. Դատարանն ընդունում է, որ դիմումատուն կրել է ոչ նյութական վնաս, որը բավարար չափով չի փոխհատուցվում խախտումն արձանագրելով: Դատարանը, կատարելով իր գնահատումն արդարացիության սկզբունքով եւ հաշվի առնելով գործի հանգամանքները, դիմումատուին շնորհում է 3,100 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

69. Ավելին, Դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ վճիռը, որով այն Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում է արձանագրում, պատասխանող Պետության վրա իրավական պարտավորություն է դնում ոչ միայն շահագրգիռ անձանց վճարել արդարացի փոխհատուցման կարգով տրամադրվելիք գումարները, եթե այդպիսիք կան, այլ նաեւ Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ ընտրել ընդհանուր եւ (կամ), անհրաժեշտության դեպքում, անհատական բնույթի միջոցներ, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել ներպետական իրավական համակարգում՝ Դատարանի կողմից արձանագրված

խախտմանը վերջ դնելու եւ դրա հետեւանքների համար այնպիսի հատուցում տրամադրելու համար, որ հնարավորինս վերականգնվի խախտումից առաջ առկա իրավիճակը (տե՛ս *Սկոզարին եւ Ջունտան ընդդեմ Իտալիայի* [ՄՊ] [*Scozzari and Giunta v. Italy*] [GC], թիվ 39221/98 եւ 41963/98, § 249, ՄԻԵԴ 2000-VIII, *Իլաշկուն եւ այլոք ընդդեմ Մոլդովայի եւ Ռուսաստանի* [ՄՊ] [*Ilaşcu and Others v. Moldova and Russia*] [GC], թիվ 48787/99, § 487, ՄԻԵԴ 2004-VII, եւ *Լունգոկին ընդդեմ Ռումինիայի* [*Lungoci v. Romania*], թիվ 62710/00, § 55, 2006 թվականի հունվարի 26): Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում արձանագրելու դեպքում դիմումատուի համար պետք է հնարավորինս վերականգնվի այն իրավիճակը, որում նա կգտնվեր, եթե սույն դրույթի պահանջները չանտեսվեին (տե՛ս, *mutatis mutandis*, *Սեյդովիչն ընդդեմ Իտալիայի* [ՄՊ] [*Sejdovic v. Italy*], [GC], թիվ 56581/00, § 127, ՄԻԵԴ 2006-II, եւ *Յանակիենն ընդդեմ Բուլղարիայի* [*Yanakiev v. Bulgaria*], թիվ 40476/98, § 89, 2006 թվականի օգոստոսի 10):

70. Դատարանն այս առնչությամբ նշում է, որ Քրեական դատավարության օրենսգրքի 426.1 եւ 426.4 հոդվածներով նախատեսվում է ներպետական դատական ակտը վերանայելու հնարավորություն, եթե Դատարանն արձանագրել է Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում (տե՛ս վերոնշյալ 35-րդ եւ 36-րդ պարբերությունները): Ամեն դեպքում, Դատարանի կարծիքով, եթե այն համարում է, որ դատաքննությունն իրականացվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության երաշխիքների խախտմամբ, հատուցման ամենապատշաճ ձևը, որպես կանոն, կլինի պատշաճ կարգով գործի վերանայումը՝ արդար դատաքննության բոլոր պահանջներին համապատասխան (տե՛ս, *mutatis mutandis*, *Լունգոկիի* գործը, վերելում հիշատակված, § 56):

Բ. Ծախսերը եւ ծախքերը

71. Դիմումատուն այս մասով որեւէ պահանջ չի ներկայացրել:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

72. Դատարանը նպատակահարմար է համարում, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական

բանկի սահմանած՝ փոխառության առավելագույն տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային միավոր:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ՝

1. Հայտարարում է գանգատն ընդունելի.

2. Վճռում է, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի հետ համատեղ՝ դիմումատուի՝ իր դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու հնարավորությունից զրկվելու առնչությամբ:

3. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ տեսաերիզները չհետազոտելու առնչությամբ.

4. Վճռում է, որ

ա) պատասխանող Պետությունը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վճիռը վերջնական դառնալու օրվանից հետո երեք ամսվա ընթացքում ոչ նյութական վնասի դիմաց պետք է դիմումատուին վճարի 3,100 եվրո (երեք հազար հարյուր եվրո)՝ գումարած ոչ նյութական վնասի մասով գանձման ենթակա ցանկացած հարկ, որոնք պետք է փոխարկվեն Հայաստանի Հանրապետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչև վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ փոխառության առավելագույն տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային միավոր.

5. Մերժում է դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2016 թվականի հոկտեմբերի 27-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Աբել Կամպոս

Միրյանա Լազարովա Տրայկովսկա

Քարտուղար

Նախագահ